**Պատմություն և մշակույթ** 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.008

# The Reasons for the Emergence of Armenian Statehood in Cilicia

**Areg Vardanyan**
https://orcid.org/0009-0002-8862-8590
YSU Candidate of Historical Sciences
vardanyanareg1@yahoo.com

**Keywords:** Cilician Armenia, nakharar (ministerial) system, Armenian-Byzantine relations, Battle of Manazkert (1071), political thinking.

*The goal of this article is to show that the formation of Armenian statehood in Cilicia was not merely a result of demographic changes that took place in that region during the 10th-11th centuries. Challenging the overwhelming scholarly consensus over the demographic origins of Armenian statehood in Cilicia, the article reconsiders the process of state formation, putting emphasis on the changing social standing and mentality of the late 11th-century Armenian feudal elite and presenting it as the main driving force behind this process in 11th-12th-century Cilicia.*

## Կիլիկիայում հայկական պետականության պատճառները

**Արեգ Վարդանյան**
ԵՊՀ, պատմական գիտությունների թեկնածու

**Հիմնաբառեր՝** Կիլիկյան Հայաստան, Նախարարական համակարգ, հայ-բյուզանդական հարաբերություններ, Մանազկերտի ճակատամարտ (1071 թ.) քաղաքական մտածողություն:

*Այս հոդվածի նպատակն է ցույց տալ, որ Կիլիկիայում հայկական պետականության ձևավորումը միայն X-XI դարերում այդ տարածաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունների արդյունք չէր: Հակառակ Կիլիկիայում հայկական պետականության ժողովրդագրական ծագման վերաբերյալ գիտական հիմնական կոնսենսուսին՝ հոդվածը վերանայում է պետականության ձևավորման գործընթացը՝ շեշտը դնելով XI դարավերջի հայ*

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 8-17

Received: 15.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 18.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

*ֆեոդալական վերնախավի փոփոխվող սոցիալական դիրքի ու մտածելակերպի վրա և այն ներկայացնելով որպես X-XI դարերի Կիլիկիայում այս գործընթացի հիմնական շարժիչ ուժ։*

## Причины возникновения армянской государственности в Киликии

**Арег Варданян**
ЕГУ, кандидат исторических наук

**Ключевые слова:** Киликийская Армения, нахарарская (министерская) система, армяно-византийские отношения, Манцикертская битва (1071 г.), политическое мышление.

*Цель данной публикации показать, что появление армянского государства на территории Киликии не являлся результатом сугубо демографических изменений (переселения армян начиная от X-XI вв.). Опровергая бытующее мнение о демографических корнях армянского государства на территории Киликии, в статье делается попытка показать, что образование Армянского киликийского княжества представляет собой результат коренного изменения в социальном положении и ментальности армянских феодалов середины XI в.*

* * *

***Ներածություն***։ Եթե անգամ թռուցիկ հայացք նետենք III-XI դարերի հայկական պետականության կերպափոխությանը, դժվար չէ նկատել կարմիր թելով անցնող երկու միտում՝ կենտրոնական իշխանության թուլացում և նախարարական ընտանիքներին պատկանող հողերի կրճատում։ Այսպես, եթե III-**V** դարերում դանդաղ անկում էր ապրում կենտրոնացված պետականությունը, սակայն նախարարական հողատիրությունը, ընդհանուր առմամբ, անսասան էր, ապա **V**-**V**III դարերում մի շարք տարածքներ, որտեղ իշխում էին հայ նախարարներ, այլև նրանց չեն պատկանում[1]։ Թեպետ այս անկման մեջ կա մի կարևորագույն խզում՝ Աշոտ Ա Բագրատունու կողմից թագավորության վերականգնումը, սակայն, ինչպես դիպուկ նկատել են հայագիտության երախտավորները, այս պետությունը նախարարական տների մի համադաշնություն էր, հեռու անգամ Արշակունյաց շրջանի կենտրոնացումից [Մանանդյան 1978, 596-597։ Հովհաննիսյան 1957, 111-112։ հմմ. Еремян 1979, 7]։ Դժվար է չնկատել, որ Աշոտ Բագրատունու տպավորիչ քաղաքական գործունեությունից հետո երկիրը թևակոխում է ինքնաբաժանման արատավոր մի շրջան, ինչի արդյունքում ստեղծվում են «մանր»

---

Շնորհակալություն ենք հայտնում պ.գ.դ. Ազատ Բոզոյանին և պ.գ.թ. Միքայել Մալխասյանին՝ հոդվածի շուրջ շահեկան դիտարկումներ կատարելու համար։

[1] Այս գործընթացի մեջ կարևորագույն դեր են խաղացել Հուստինիանոս կայսեր քայլերը։ Այս հարցի շուրջ հիմնարար աշխատություն է Նիկողայոս Ադոնցի հայտնի մենագրությունը, որի վրա հիմնված են մինչ այժմ գրված հիմնական գործերը [Адонц 1971, 157, 193-196։ Իսկանյան, 1991, 235-237։ Evans 2005, 155։ Haarer 2022, 35 և այլն]։ Մեկ այլ պատճառ է մահմեդական ցեղերի բնակեցումը Մեծ Հայքի տարածքում։ Երրորդ պատճառ է քաղաքային կենտրոններում մահմեդականների պետական կազմակերպումը։ Չորրորդ պատճառ էր տիրակալների կողմից իրենց գավառների բռնի-կամովի հանձնումը Բյուզանդիային, ինչի մասին ավելի մանրամասն կխոսենք։

թագավորություններ, ինչպես Տաշիր-Զորագետը, Կարսը և այլն: Այս գործընթացի արդյունքում է, որ Գագիկ Ա-ի մահվանից հետո Հայոց թագավորի տիրապետության տակ գտնվող փաստացի տարածքը կրճատվել էր՝ ընդգրկելով միայն Անիի ու նրա շրջակա գավառները: Սակայն սա դեռ ավարտը չէր: Անկման գործընթացի գագաթնակետն էր հետսելջուկյան շրջանի Հայաստանը, երբ իսպառ վերացան Բագրատունյաց ժամանակաշրջանից մնացած պետական-քաղաքական համակարգի վերջին մասնիկները, և կտրուկ կրճատվեց հայ տիրակալներին պատկանող հողային «ֆոնդը»:

Իրերի այսպիսի ընթացքը պետք է գուժեր Հայոց պետականության վերջնական քայքայում XII դարում, երբ վերջին մանր միավորները կլանվեցին հարևան պետությունների կազմում[1]: Այս ընթացքին հակառակ՝ XII դարում տեղ գտան երկու հզոր պետականաստեղծ շարժումներ, որոնց արգասիքն էին Կիլիկյան թագավորությունն ու Զաքարյան իշխանապետությունը: Թեպետ այս երկու միավորները խիստ տարբերվում էին իրարից իրավականության աստիճանով ու մի շարք այլ կարևոր նրբություններով, սակայն ակնհայտ է, որ երկու միավորներն էլ զգալիորեն, կարելի է ասել, հեղափոխական կերպով ընդլայնեցին հայ տիրակալների սպառված հողային «ֆոնդը»:

XIII դարավերջին, ի մի բերելով Կիլիկյան Հայաստանի հիմնադրումը, Մխիթար Այրիվանեցին գրում է. «Աստ տիրեցին Կիւլիկիոյ Ռուբինեանքն, դատ արար Աստուած զրկելոցս. զի Հոռոմն եբարձ զմեր թագաւորութիւնն, իսկ Աստուած զերկիր նոցա ետ Հայոց, որք եւ այժմ թագաւորեն ի նմա» [Մխիթար Այրիվանեցի 1860, 59]: Ճիշտ է, պատմիչը խոսում է քրիստոնեական մտքին հատուկ ի վերուստ նախախնամության տրամաբանության մեջ: Սակայն միանգամայն հասկանալի է, որ նրա համար էլ օտար հողերում (առավել ևս առանց դրանք ռազմականապես գրավելու) սեփական պետություն ստեղծելը արտառոց մի երևույթ է: Այսպիսով՝ ի՞նչը դրդեց հայ իշխանների մի շերտին ձգտելու ստեղծել իրենց պետությունը օտար մի վայրում:

Մասնագիտական գրականության մեջ այս հարցն առանձնակի քննության չի արժանացել: Հետազոտողների մեծ մասը դիտարկում է Կիլիկյան պետության առաջացումն իբրև «բնական» մի երևույթ: Դրա պատճառը, կարծում ենք, պայմանականորեն ասված Կիլիկյան Հայաստանի ստեղծման «ժողովրդագրական տեսությունն է»: Այս «տեսության» կողմնակիցները Կիլիկիայում հայկական պետականության հաստատումը կապում են պետականության «թարմ» հիշողությամբ ու տարերային գաղթի ալիքներով (սկսված դեռ Բյուզանդական տիրապետության շրջանից), ինչի արդյունքում Կիլիկիայում հաստատվում են հայ հասարակության նախկին կառույցները [Բակուրան 1904, 9-10: Լէօ 1915, 194-195: Հայ ժողովրդի պատմություն 1976, 673-677: Миакелян 1952, 50-54: Der-Nersessian 1962, 630-634: Ghazaryan 2000, 41-44][2]: Սակայն պետությունների

[1] Խոսքը Վասպուրականի, Տարոնի, Սյունիքի և Տաշիր-Զորագետի մասին է: Բացառություն է միայն Արցախը [Հայ ժողովրդի պատմություն 1976, 471-478, 482-487]:

[2] Մեծ հաշվով՝ նույն միտք է Սեդա Տատոեանի աշխատության հիմքում, սակայն շեշտը դնելով (անշուշտ փոքր-ինչ չափազանցրած) ոչ հայադավան հայերի վրա [Dadoyan 2017, 33-62, 258-259]: Կիլիկիայի պատմությանը նվիրված մի շարք կարևոր աշխատություններում այս հարցը ուղիղ դրված չէ, սակայն որպես Կիլիկյան պետության մեկնակետ է ընկալվում հայերի գաղթը [Բոզոյան 1988, 7: Dedeyan 2003, XXVIII]: Փոքր-

անկումը չի ենթադրում դրանց ինքնըստինքյան վերականգնում: Եթե Բագրատունյաց պետության անկումը հիրավի հաջորդվեց Կիլիկյան ու Զաքարյան վերականգնումներով, ապա ո՛չ Կիլիկյան թագավորության, ո՛չ էլ Զաքարյան իշխանապետության անկումները չհանգեցրին համապատասխան վերականգնման: Բացի դրանից՝ ժողովրդագրական գերակայությունը ինքնին չի հանգեցնում պետականության, ավելին՝ պետություններ ու կայսրություններ ստեղծած մի շարք ժողովուրդներ իրենց երկրներում փոքրամասնություն էին, ինչպես մակեդոնացիները և հույները Ալեքսանդրի տերությունում, մոնղոլները Իշխանությունում կամ սելջուկները Շահ-Արմենների պետությունում: Այսպիսով՝ Կիլիկիայի հայկական պետականության ստեղծումը չի կարելի բացատրել զուտ պետական «հիշողության» կամ ժողովրդագրական փոփոխությունների հողի վրա, որքան էլ կարևոր չլինեն այս երկու գործոնները:

Մեկ այլ տեսություն է առաջ քաշել ռումինական պատմագրության երախտավոր և ռումինահայ համայնքի բարեկամ [Սիրունի 1966, 182-192] Նիկոլա Յորգան: Նա պետության կայացումը Կիլիկիայում պայմանավորում է Ռուբինյանների ու լատինների սերտ հարաբերություններով, այլ կերպ ասած՝ «արևմտյան արյան»[1] ներթափանցմամբ հայկական միջավայր: Հեղինակը չի մանրամասնում, թե ինչ սկզբունքով էր հայկական միջավայրին նոր ուժ հաղորդած «արևմտյան արյունը» գործում, ինչ առավելություն տվեց դա Ռուբինյաններին, այլ կերպ ասած՝ հեղինակի այս տեսակետն ավելի շատ կարծիք է հիմնված Ռուբինյանների ու խաչակիրների գործակցության վրա, քան քննական եզրահանգում: Ավելին՝ առանց այդ էլ պարզ է, որ «ազգային-մշակութային» անորոշ հասկացությունների հիման վրա չի կարելի բացատրել պետությունների առաջացումն ու անկումը, քանի որ լանգոբարդները, խազարները և այլ ժողովուրդներ հաջողությամբ հիմնադրել են պետություններ ու «փառքով» ականատես եղել դրանց ոչնչացմանը: Կարելի է բերել մի շարք այլ օրինակներ:

«Ժողովրդագրական տեսության» հիմքի վրա ավելի լուրջ եզրահանգում է կատարում Կլոդ Մութաֆյանը: Նա առաջարկում է դիպուկ մի բանաձև՝ «պետականության արտագաղթ» բնորոշելու համար յուրահատուկ այս երևույթը, երբ ստեղծվում է «Հայոց թագավորություն Հայաստանից դուրս»: Հիմնվելով Միքայել Ասորու հաղորդումների վրա՝ Մութաֆյանն առաջարկում է հայերի հաստատումը Կիլիկիայում բաժանել երեք փուլի՝ Բյուզանդիայի կողմից հայերի բնակեցման փուլ, Հայոց արքաների հաստատում Կապադովկիայում ու Փոքր Հայքում և վերջապես Մեծ Հայքի սելջուկյան ներխուժման պատճառով առաջացած արտագաղթի նոր ալիք դեպի Կիլիկիա: Շեշտելով, որ միայն ռազմական ուժը չի կարող համարվել որոշիչ գործոն Կիլիկյան պետականաստեղծման գործում՝ նա գտնում է, որ պետք է ուշադրություն դարձնել նուրբ դիվանագիտական քայլերին և հաջող *realpolitik*-ին, որ վարել են Կիլիկիո հայ իշխանները [Mutafian 2012, 53-54]:

Մութաֆյանի մոտեցումը կարելի է համարել առավել խորունկը. այստեղ կա մի հիշարժան նրբություն: Ո՞րն է պատճառը, որ Կիլիկիա գաղթած պետականությունը ձախողվեց Մեծ Հայքում,

---

ինչ այլ է Լևոն Տեր-Պետրոսյանի մոտեցումը, որը ժողովրդագրությունը համարում է ոչ թե պետականության ակունք, այլ դրա երկարակեցության գաղտնիք [Տեր-Պետրոսյան 2007, 29]:

[1]Յորգան գրում է. «Առանց խաչակրության բերած նպաստի, առանց արևմտյան արյան այս ներարկման, առանց կենսատու Արևմուտքի այս ամենազոր ազդեցության, այս պետությունը, չափսերով այսքան փոքրացած, ինչպիսին Կոստանդինին էր, կունենար նույն ճակատագիրը ինչ-որ, ավելի հզոր և անցողիկ փառքով պատված Գող Վասիլինը». [Iorga 1930, 18]:

սակայն հաջողեց հեռավոր Կիլիկիայում: Չէ՞ որ եթե Բագրատունյաց շրջանի պետական կառույցները ամուր լինեին, նրանք առնվազն կգոյատևեին մինչև սելջուկյան առաջին արշավանք, ինչպես դա եղավ Կյուրիկյանների, Վրաց թագավորության ու Արցախի իշխանների հետ: Եթե անգամ համարենք, որ Բագրատունյաց թագավորությունը դարձավ բյուզանդական կայսերապաշտության զոհը, մի բան, որից աշխարհագրական պատճառներով զերծ էին Լոռին, Վիրքն ու Արցախը, ապա Կիլիկյան պետականության ավարտը պետք է վրա հասներ 1130-ական թթ. Բյուզանդիայի կայսր Հովհան Կոմնենոսի արշավանքի արդյունքում [Բոզոյան 1988, 99 և հետո], ինչը, սակայն, ինչպես գիտենք, տեղի չունեցավ:

Այսպիսով՝ Կիլիկիայում հայկական երկարամյա և կայուն պետականության առաջացման պատճառի հարցը կարոտ է հետազոտման: Կարծում ենք՝ այս հարցի լուծումը պայմանավորված է երկու իրողությամբ՝ մեկը գաղափարական[1], մյուսը՝ ընկերաբանական (սոցիոլոգիական): Այս հոդվածում մենք կքննենք միայն ընկերաբանական մասը, որը կապված է Մանազկերտի ճակատամարտից հետո հայ վերնախավի վարքի փոփոխության հետ:

Ինչպես նշեցինք վերևում, Արշակունյաց անկումից հետո հայկական տիրակալներին ենթակա տիրույթներն ընկան աստիճանական կորսման փուլ: Այս անկումը պայմանավորված էր մի շարք՝ իրարից անկախ հանգամանքներով: Սակայն այդ տարբեր հանգամանքներից բացի՝ կար մեկ հանգամանք, որը կենտրոնական դեր էր խաղում: Դա Հայաստանին կից կայսրություններն էին, նախևառաջ՝ Բյուզանդիան: Մինչ Մանազկերտի ճակատամարտը հայ թագավորներն ու իշխանները կլանվում էին Բյուզանդական համակարգի վերնախավի հետ հարաբերության մի ձևով, որ կոչվում էր խմբառում (co-optation)[2]: Այս մոտեցման հիմքում էր որոշակի տարածքի՝ առկա վերնախավերին «տեղավորելը» Բյուզանդական քաղաքական համակարգում[3]՝ տալով նրանց տիտղոսներ և/կամ փոխանակելով նրանց ժառանգական հողերը կայսրության այլ մասերում տրվող հողերի հետ:

Բյուզանդիայի կողմից բանեցվող խմբառման քաղաքականությանը հայ վերնախավն ուներ երկատված վերաբերմունք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միայն Գագիկ Բ-ն ու Վահրամ Պահլավունին էին կտրականապես դիմադրել այդ փորձերին, ի տարբերություն Վեստ Սարգսի, Տայքի Ապուկապների ու Բակուրյանների, Տարոնի իշխանների, Գագիկ Կարսեցու, Սենեքերիմ

[1] Խոսքը «թագավորության վերականգման գաղափարի» մասին է [Վարդանյան 2024]:

[2] Եզրույթի թարգմանությունը մերն է: Այն գոյացել է միջնադարագիտությունից շատ հեռու՝ կազմակերպությունների ընկերաբանության ոլորտում, իսկ հեղինակն ամերիկացի հետազոտող Ֆիլիպ Սելզնիքն է: Մենք այն գործածում ենք համահունչ հետևյալ մտքին. «[Խմբառումը] որևէ կազմակերպության առանցքորդող կամ քաղաքական ուղեգիծը որոշող կառույցում նոր մասնիկների ներգրավումն է՝ իբրև միջոց բեկանելու վերջինիս կայունությանը կամ գոյությանն ուղղված վտանգները» («the process of absorbing new elements into the leadership or policy-determining structure of an organization as a means of averting threats to its stability or existence») [Selznick 1949, 259]:

[3] Այսպիսի մոտեցումը հատուկ է մի շարք կայսերական համակարգերի: Նույն պատճառն էին հետապնդում մոնղոլների կողմից տրվող ինքուներն ու ռազմական արշավների մասնակցելու պահանջը: Տեղական վերանախավերը արդյունավետորեն ներառելով իրենց քաղաքական համակարգի մեջ՝ մոնղոլները կարողացան ստեղծել մարդկային ու նյութական ռեսուրսների ահռելի մի պաշարը, ինչը, ըստ որոշ հետազոտողների, այն հիմքն էր, որի վրա հաջողեցին նրանց ահռելի նվաճումները [Allsen 1987, 7]:

Արծրունու և այլոց՝ կարող ենք ասել, որ հայկական վերնախավը հիմնականում հակված էր մտնել բյուզանդական ծառայության մեջ:

Հետևաբար հարց է ծագում՝ ինչու էր հայ վերնախավը գնում այս քայլին: Անշուշտ, պետք է առանձին ուշադրություն դարձնել նախարարական շրջանի անցուդարձերին, քանի որ հայ վերնախավի կարկառուն դեմքերը բյուզանդական ծառայության մեջ էին դեռ V-VI դարերից: Թագավորության անկումից հետո Բյուզանդիան և Իրանի դարձել էին հայկական նախարարների նկատմամբ գերակա ուժ: Այդ իսկ պատճառով իբրև ծայրամասային վերնախավ մի շարք անհատներ ձգտում էին ծառայության անցնել՝ կայսրության կենտրոնում սեփական դիրքերը հզորացնելու համար: Սակայն ուշադրություն դարձնենք այս շրջանում առկա մի կարևոր առանձնահատկության վրա: Բանն այն է, որ նախնական շրջանում Բյուզանդիայի դիմաց կար նույնքան հզոր Իրան: Այսպիսով՝ կայսրություններին ծառայության անցնելով՝ դժվար չէր խուսանավել այս գերտերությունների միջև՝ պահելով սեփական տարածքները [Սէբեոս 2007, 488-490: Պրոկոպիոս Կեսարացի 1967, 30, 42, 81]:

X դարում մեր առջև բոլորովին այլ իրավիճակ է: Այստեղ մենք տեսնում ենք աշխարհաքաղաքական «խախտված» հավասարակշռություն: Խալիֆայությունը կորցրել է իր քաղաքական միասնականությունը, իսկ Բյուզանդիան ապրում է ուժերի զարթոնքի շրջան: Իրար հաջորդող բյուզանդական արշավանքների արդյունքում կայսրությունն արաբներից գրավում էր տարածքներ, հարկային կախվածության մեջ դնում տարբեր էմիրությունների[1]: Բնականաբար, հասկանալի է, որ հայ իշխաններն այլևս չունեին իրենց ավանդական խուսանավելու տեղը: Արաբները չէին կարող հակակշռել Բյուզանդիային: Բագրատունյաց Հայաստանի ձախողված կենտրոնացումն ու համադաշնային բնույթը դժվարացնում էին Բյուզանդիայի կանոնավոր բանակի դիմաց հուժկու դիմադրության ցուցաբերումը: Այն պահից, երբ այս կամ այն պատճառով տիրակալներն անկարող էին պաշտպանել իրենց տիրույթները սեփական ուժերով, նրանք կամ պետք է «հաղթահարեին» իրենք իրենց՝ գնալով դեպի ավելի արդյունավետ պետության կազմակերպման, կամ ուղղակի փորձեին իրենց հողերի դիմաց փոխահատուցում ստանալ Բյուզանդիայից: Այս հանգամանքը հավանաբար շատ լավ գիտակցում էին Բյուզանդիայում, քանի որ կայսրությունն արդյունավետորեն ստեղծեց նման պայմաններ Տարոնի, Տայքի ու Անիի համար: Սելջուկյան ասպատակությունները լրացուցիչ խթան հանդիսացան Վասպուրականի ու Կարսի համար: Այսպիսով՝ հայկական վերնախավի համար բնական մի բան էր դարձել սեփական տիրույթները հանձնել Բյուզանդիային՝ իրենց անձնական վերնախավային դիրքը բյուզանդական համակարգում պահպանելու համար:

Իրավիճակը կտրուկ փոխվեց Մանազկերտի ճակատամարտից հետո: Եթե մինչ այդ իշխանները դեռ կարող էին իրենց իշխանական կյանքը վարել Բյուզանդիային ծառայելու հաշվին, ապա 1071 թվականից հետո կայսրությունը ներքաշվեց անկայունության մի հորձանուտ: Փոքրասիական տարածաշրջանում կենտրոնաձիգ վարչարարական պետությանը միապետի գերհզոր հաստատությամբ գալիս էր փոխարինելու քաղաքական մասնատվածության դարաշրջան [Vryonis 1971: Beihammer 2017: Անանուն Եդեսացի 1982, 33, 40]: Սելջուկյան զորահրամանատարները մեկը մյուսի ետևից ստեղծում էին ինքնավար պետական միավորներ: Այսպիսի միավորներ են

[1] Այս գործընթացի մասին կա մեծածավալ գրականություն: Հարցի մասին կարելի է ընդհանուր պատկերացում համար կարելի է օգտվել հետևյալ աշխատանքներից [Ostrogorsky 1968, 283 և հետո: Kaplan 2016, 192-201]:

ստեղծում Դանիշման դազին [Beihammer 2017, 202], Սուլեյման իբն Ղուտալմըշը [Peacock 2015, 65-66], Անիի Շադդադյանները [Հայ ժողովրդի պատմություն 1976, 478-482] և այլք։ Կարճ ժամանակ անց սրանց ավելացան Շահ-Արմենները [Նույն տեղում, 487-490], Կարնո Սալդուխյանները [Խաչատրյան 1988, 99-133] և այլք։ Պետք է նշել, որ սեփական պետություն ստեղծելու անհաջող փորձ ձեռնարկեց նաև լատին վարձկանների առաջնորդ Ռուսսել դը Բայոլը [Vryonis 1971, 106-108]։ Այսպիսով՝ հայ իշխանները կորցրին իրենց գոյության դարավոր պայմանաձևը։ Զրկված լինելով թե՛ հողից, թե՛ կայսերական հովանավորչությունից՝ նրանց գոյության պահպանման տեսանկյունից շահավետ դարձավ սեփական պետությունների ստեղծումը։ Սրանով էլ պետք է բացատրել քաղաքական ինքանավարության ձգտման հանկարծակի աճը հետմանազկերտյան հայկական միջավայրում։ Այն նույն մարդիկ, որոնց համար տրամաբանական էր այս կամ այն չափով ծառայել կայսրության պետական մեքենային, տրամաբանական էր ստեղծել սեփական ինքնավարություն։

**Եզրակացություն**։ Այսպիսով՝ Կիլիկյան Հայաստանի հիմնադրումը չի կարելի կապել ո՛չ սոսկ «գաղթի» ու ժողովրդագրական գործոնների հետ, ո՛չ էլ պետական հաստատությունների գաղթի հետ։ Կիլիկիայի հայկական պետության ստեղծման վերոնշյալ գործոններին զուգահեռ պետք է անպայմանորեն ուշադրություն դարձնել Բյուզանդիայի տարածքի «ավատական մասնատման» արդյունքում հայ վերնախավի վարքի փոփոխության վրա։ Քանի որ մի շարք հայ իշխանավորներ (Փիլարտոս, Գող Վասիլ, Ռուբինյաններ, Լամբրոնացիներ և այլք) Մանազկերտի պարտության պահին պահպանել էին ռազմական որոշակի ուժ, նրանք չէին կարող «հին ժամանակների» պես այն դնել կայսեր ծառայության տակ՝ նրանից ակնկալելով քաղաքական ու տնտեսական շահեր։ Նրանք կա՛մ պետք է հպատակվեին սելջուկյան հրոսակներին և զրկվեին ռազմաքաղաքական դերից, կա՛մ պետք կայսերական տարածքի «ավատական մասնատումից» պոկեին իրենց հասանելիք մի բաժին։ Այս է պատճառը, որ երկու դար շարունակ սեփական հողերը կամովին-պարտադրաբար [հմմ. Բոզոյան 1988, 7] Բյուզանդիային նվիրաբերող մարդկանց շրջանում ասես չգոյից ի հայտ եկան անդադար պատերազմների մեջ իրենց տարածքները ամեն գնով պահող գործիչներ։

Չնայած այն հանգամանքին, որ սեփական պետություն ստեղծելն ուներ լուրջ շահադիտական հիմքեր, կային վերնախավի հարմարման այլ եղանակներ նույնպես։ Մեկ այլ՝ ավելի քիչ արդյունավետ քաղաքականություն էր մահմեդականացումը։ Փիլարտոսն իր իշխանությունը պահելու համար կյանքի վերջում իսլամ ընդունեց [Ուռհայեցի 1991, 250]։ Մահմեդական հայ իշխաններից հայտնի էր Պողոսակյանների փոքրիկ իշխանությունը [Տեր-Պետրոսյան 2007, 497-498։ Dadoyan 1997, 72]։ Ըստ Մատթեոս Ուռհայեցու ու Նիկետաս Խոնիատեսի՝ Դանիշմանը հայկական ծագում ուներ [Ուռհայեցի 1991, 250][1]։ Խոնիատեսը հիշատակում է նաև Դանիշմանյան տիրակալ Մուհամմեդին, որը «հեռավոր ազգակցություն էր առնում Արշակունիներից, իսկ

[1] Խոնիատեսը «պարսկահայ»/*Περσαρμένιος* է կոչում Դանիշմանին [Nikitas Choniates 1975, 19]։

անմիջականորեն ծագում էր Դանիշմանյաններից»[1]: Այս շրջանում է պատմության թատերաբեմ իջավ Ֆաթիմյան վեզիր Բադր ալ-Ջամալը, որ իսլամադավան հայ էր [Dadoyan 1997, 106 և հետո]:

Ամեն դեպքում վերնախավի մահմեդականացումն առանձնակի լայն տարածում չունեցավ: Այս հանգամանքը պետք է բացատրել միջնադարյան աշխարհում կրոնափոխության նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքով, ինչը հղի էր իշխանավորի համար իր ստորականներից օտարվելու վտանգով: Այդ իսկ պատճառով իրենց դիրքը պահպանում էին հիմնականում այն կրոնափոխները, որոնք կարողանում էին տեղ ստանալ մահմեդական երկրի կենտրոնական վարչարարությունում, իսլամադավան երկրամասերում կամ առաջնորդում էին իսլամադավան բանակ, ինչպես Բադր ալ-Ջամալը և Դանիշման ղազին:

Կարելի է ենթադրել, որ փլուզվող Բյուզանդիայի քաղաքական քաոսի մեջ սավառնող հայ իշխանների աշխարհայացքի արտահայտումը ներթափանցել է նաև ժամանակի եկեղեցական մատենագրություն: Այսպես, Մատթեոս Ուռհայեցու պատմական երկում հաճախ են տեսանելի առանձին գործիչների քաջության մասին պատմող, վիպական պատում հիշեցնող դրվագներ: Նա նկարագրում է Դավիթ Անհողինի մարտական ճառը [Ուռհայեցի 1991, 90], երկու եղբայրների հերոսությունը սելջուկ-թյուրքերի դեմ [Նույն տեղում, 170], Գագիկ Բ Անեցու «ազգային արժանապատվությամբ» դրդված վարքը [Նույն տեղում, 174, 194], Թոռնիկ իշխանի մարտակոչը [Նույն տեղում, 142], Պեխտ իշխանի քաջությունները [Նույն տեղում, 170], Անիի իշխանների անսպասելի ռազմական ելույթը [Նույն տեղում, 288] և այլն:

Մենք հակված չէինք լինի պնդել, որ սա որոշակի աշխարհայացքի փոփոխության նշան է, եթե չլիներ մեկ այլ նմանատիպ պատմական աղբյուր՝ Ներսես Շնորհալու «Վիպասանութիւնը», որ գրվել է մոտավորապես նույն ժամանակահատվածում[2]: Այստեղ եկեղեցական միջավայրի համար անսովոր ուժգնությամբ գովերգվում են ռազմական արժեքները, նախևառաջ՝ անձնուրաց քաջությունը [Ներսէս Շնորհալի 1981, 33-34,42-43, 93-94]: Շնորհալին ծաղկաքաղ է անում Մովսես Խորենացու երկասիրության՝ հերոսական ոգով տոգորված հատվածները՝ դարձնելով դրանք իր շարադրանքի ատաղձը [Նույն տեղում, 20-23]: Այսպիսով՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ իշխանների մարտական տրամադրությունները ներթափանցել էին նաև ժամանակի գրականություն: Հետևաբար ոչ միայն հայկական քաղաքական վերնախավն էր դարձել ավելի պայքարող ու մարտունակ, այլև նրանց այդ աշխարհայացքի որոշ շերտեր ներթափանցել էին հոգևոր մատենագրության մեջ:

Ամփոփելով նշենք, որ Կիլիկյան Հայաստանի և առհասարակ պետականության պատմության տեսանկյունից, ի թիվս այլ գործոնների, պետք է ուշադրություն դարձնել վերնախավի հասարակական դիրքին ու ներքաղաքական դասավորվածությունների կառուցվածքին: Իհարկե, Կիլիկիայի հայկական պետության ստեղծման գործում մեծ դեր ուներ նաև գաղափարախոսությունը, որին անդրադարձել ենք մեր մեկ այլ հրապարակման մեջ [Վարդանյան, 2024]:

---

[1] *τὸ μὲν ἄνωθεν γένος ἐς τοὺς Ἀρσακίδας συναλειφόμενος, τὸ δὲ προσεχὲς ἐκ Τανισμανίων καταγόμενος·* [Nikitas Choniates 1975, 34]:

[2] «Վիպասանությունը» գրվել է 1121 թ., իսկ Ուռհայեցու պատմության վերջին հատվածները՝ 1130-ականներից ոչ ուշ [Ներսէս Շնորհալի 1981, 5, 142: Ուռհայեցի 1991, 480]:

## Գրականության ցանկ

**Ananun Yedesats'i 1982,** Zhamanakagrut'yun, ashkh. L. Ter-Petrosyani, Yerevan, HSSH GA hrat, 266 ej. (in Armenian).

**Bakuran 1904,** Mi tesut'iwn Kilikioy haykakan ishkhanut'ean vray, Nikosea, tp. Azg. Krt'. Vorbanots'i, 161 ej. (in Armenian).

**Bozoyan 1988,** Byuzandiayi arevelyan k'aghak'akanut'yuny yev Kilikyan Hayastany, Yerevan, HSSH GA hrat., 286 ej. (in Armenian).

**Iskanyan 1991,** Hay-byuzandakan haraberut'yunnery IV-VII dd., Yerevan, «Gitelik'» hrat., 1991, 638 ej. (in Armenian).

**Leo 1915,** Hay Hayrenik', T'ifliz, tp. N. Aghaneani 1915, 244 ej. (in Armenian).

**Khach'atryan 1988**, Karno Saldukhyanneri zhamanakagrut'yuny yev tohmabanut'yuny, yst arabakan vimagir aghbyurneri, «Arevelyan aghbyuragitut'yun», 1, Yerevan, 1988, ej 99-133. (in Armenian).

**Hay zhoghovrdi patmut'yun 1976,** h. III, Yerevan, HSSH GA. hrat., 1023 ej. (in Armenian).

**Hovhannisyan 1957**, Drvagner hay azatagrakan mtk'i patmut'yan, h. 1, Yerevan, HSSRR GA hrat., 525 ej. (in Armenian).

**Manandyan 1978,** Yerker, h. B, Yerevan, HSSH GA hrat., 647 ej. (in Armenian).

**Mkhit'ar Ayrivanets'i 1860**, Patmut'iwn Hayots', ashkh. M. Emini, Moskva, Lazarean chemarani tp., ej 69+18. (in Armenian).

**Nerses Shnorhali 1981,** Vipasanut'iwn, ashkh. M. Mkrtch'yani, Yerevan, HSSH GAA hrat., 164 ej. (in Armenian).

**Prokopios Kesarats'i 1967**, Otar aghbyurnery Hayastani yev hayeri masin, 5, ashkh. H. Bart'ikyani, Yerevan, HSSRR GA hrat., 363 ej. (in Armenian).

**Sebeos 2005**, Patmut'iwn, ashkh. G. Abgareani, Matenagik' Hayots', ht. D, Ant'ilias, Kilikio kt'gh. tp., ej 453-565. (in Armenian).

**Siruni 1966,** Hay yekeghets'in Rrumen hoghi vra. Nikola Yorga, S. Ejmiatsin, Mayr At'vorr S. Ejmiatsin, 268 ej. (in Armenian).

**Vardanyan 2024**, Voghbatesilayin mtatsoghut'yuny yev t'agavorut'yan verakangnman gaghap'ary Hayastanum 5-12 dd. (tesakan ditarkumner), «Patmut'yun yev mshakuyt'», 2, ej 8-19. (in Armenian).

**Ter-Petrosyan 2007**, Khach'akirnery yev hayery, h. B, Yerevan, , 672 ej: (in Armenian).

**Urrhayets'i 1991,** Zhamanakagrut'yun, ashkh. M. Melik'-Adameani, N. Ter-Mik'ayeleani yev H. Bart'ikyani, Yerevan, YePH hrat., 540 ej. (in Armenian).

**Adonc 1971,** Armeniâ v épohu Ûstiniana, Erevan, izd-vo EGU, 526 s. (in Russian).

**Eremân 1979,** Obŝnost′ sudeb i kul′turno-političeskoe sodružestvo narodov Zakavkaz′â v IX-XIII vv., «Kavkaz i Vizantiâ», № 1, s. 5-12. (in Russian).

**Mikaelân 1952**, Istoriâ Kilikijskogo armânskogo gosudarstva, Erevan, izd-vo AN ArmSSR, 535 s.. (in Russian).

**Allsen 1987,** Mongol Imperialism: The Policies of the Grand Qan Möngke in China, Russia, and the Islamic Lands, 1251-1259, Los Angeles, University of California Press, 287 p.

**Beihammer 2017,** Byzantium and the Emergence of Muslim-Turkish Anatolia, ca. 1040–1130, London/New York, Routledge, 458 p.

**Dadoyan 2017,** The Armenians in the medieval Islamic world, v. II, London/New York, Routledge, 236 p.

**Dadoyan 1997**, The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Middle East, Leiden/New York/Koln, Brill, 224 p.

**Dedeyan 2003,** Les Arméniens entre Grecs, Musulamas et Corisés, v. 1, Lisbonne, 1518 p.

**Der Nersessian 1962**, The Kingdom of Cilician Armenia, A History of the Crusades, v. II , ed. K. M. Setton, Philadelphia, University of Wisconsin Press, pp. 630-659.

**Evans 2005**, The Age of Justinian: The Circumstances of Power, London, Routledge, 360 p.

**Ghazarian 2000,** The Armenian Kingdom in Cilicia During the Crusades: The Integration of Cilician Armenians with the Latins, 1080-1393, London, Routledge, 250 p.

**Haarer 2022,** Justinian: Empire and Society in the Sixth Century, Edinburgh, Edinburgh University Press, 274 p.

**Iorga 1930,** Brève Histoire de la Petite Arménie, Paris, Gamber, 157 p.

**Kaplan 2016**, Pourquoi Byzance? Un empire de onze siècles, Paris, Gallimard, 2016, 490 p.

**Mutafian 2012,** L'Arménie du Levant (XI-XIV siècles), t. I, Paris, Les belles lettres, 2012, 731 p.

**Niketae Choniatae Historia 1975,** ed. Van Dieten, P. 1, Berlin, De Gruyter, 1975, 656 p.

**Ostrogorsky 1968**, History of the Byzantine State, Oxford, Basil Blackwell, 1968, 616 p.

**Selznick Ph. 1949**, TVA and the Grass Roots: A Study in the Sociology of Formal Organization, Berkley/Los Angeles, University of California Press, 1949, 274 p.

**Vryonis 1971,** Decline of Medieval Hellenism in Asia Minor, Berkeley/Los Angeles/London, University of California Press, 1971, 532 p.